Պաշտպանիչ վերահսկողության ծառայություններ անչափահաս երեխաների համար՝ Տնային օժանդակ ծառայությունների (IHSS)ծրագրի ներքո

Տնային օժանդակ ծառայություններ (IHSS) ծրագիրը «Պաշտպանիչ վերահսկողության»(PS) ծառայություններ է տրամադրում որոշակի չափանիշների համապատասխանող անհատներին: PS ծառայություններն են՝ հետևել ծառայություն ստացողի վարքագծին,և, անհրաժեշտության դեպքում, միջամտել՝ ծառայություն ստացողի անվտանգությունըվնասվածքներից, վտանգներից, կամ դժբախտ պատահարներիցապահովելուհամար: Այս ծրագրի ծառայությունները հասանելի են միայն հոգեկան խանգարում կամ հոգեկան հիվանդություն ունեցող**և**ինքնակառավարման ունակություն չունեցող, շփոթմունքի մեջ գտնվող անձանց համար:

Ինքնակառավարման ունակություն չունենալը, անհատների կողմից վտանգը և վնասի ռիսկը գնահատելու անկարողությունն է՝ մտավոր խանգարման/հոգեկան հիվանդության պատճառով, և,հետևաբար, նրանք, ամենայն հավանականությամբ, կարող են ներգրավվել հնարավորինսվտանգավոր գործողություններում:

Կարևոր է նշել, որ պաշտպանիչ վերահսկողությունը չի թույլատրվում հետևյալ հանգամանքներում՝

- ընկերական այցելությունների կամ այլ սոցիալական գործողությունների ժամանակ,
- երբ անհրաժեշտությունն առաջացել է բժշկական իրավիճակում և պահանջվող վերահսկողության ձևը բժշկական է,
- բժշկական շտապ իրավիճակի կանխազգացման ժամանակ,
- կանխելու կամ հսկելուհակասոցիալական կամ ագրեսիվ պահվածքը, և

- պաշտպանելու անձին կանխամտածված ինքնակործանարար վարքագծից, ինչպես օրինակ՝ինքնասպանությունը, կամ անհատի կողմից, գիտակցաբար, ինքն իրեն վնասելու մտադրությունը:

Որպեսանչափահաս դիմորդի կամ ծառայություն ստացողի ծնող կամ օրինական խնամակալ IHSS ծրագրում, Ձեր երեխայի վարչաշրջանի սոցիալական աշխատողը Ձեզ կիրազեկի, թե ինչ է իրենից ներկայացնում PS-ը և ով է իրավասու օգտվել այդ ծառայությունից:

<u>Անչափահաս դիմորդներ/ծառայություն ստացողներ և PS</u>

Ստորև բերված հիշեցումները կօգնեն սոցիալական աշխատողին որոշել, թե արդյոք PS-ը հանդիսանում է Ձեր երեխայի համար համապատասխան ծառայություն:

Վարչաշրջանի սոցիալական աշխատողը՝

- կգնահատի IHSS-ի բոլոր իրավասու անչափահասներին՝ մտավոր խանգարման/հոգեկան հիվանդության համար, և կպահանջի ծնողին/օրինական խնամակալին ձեռք բերել մատչելի տվյալներև փաստաթղթեր անչափահասի մոտ մտավոր խանգարման/հոգեկան հիվանդության առկայության մասին,
- անհատական հիմունքներով, կգնահատի հոգեկան հիվանդություն/ մտավոր խանգարում ունեցող անչափահասի հիշողության, կողմնորոշման և դատողության ֆունկցիաները,
- կիրականացնիհոգեկան հիվանդություն/մտավոր խանգարում ունեցող անչափահասի գնահատումըPS ծառայության համար, անկախ տարիքից,
- ելնելով անչափահասի հոգեկան հիվանդության/մտավոր խանգարման վիճակից, կգնահատի, թե արդյոք անչափահասն ավելի շատ վերահսկողության կարիք ունի, քան նույն տարիքի որևէ անչափահաս, ով չունի նման հիվանդություն/խանգարում, ավելի շատ վերահսկողության անհրաժեշտությունը կարող է նշանակել ավելի շատ ժամանակի հատկացում, ավելի շատ ինտենսիվություն, կամ երկուսն էլ,
- կգնահատի անչափահասի մտավոր հիվանդության/հոգեկան խանգարման վիճակը, նույնիսկ եթե անչափահասը կարող է մենակ մնալ տանը սահմանված ժամանակահատվածում,
- կվերանայի ծնողի կողմից տրամադրված ցանկացած համապատասխան տեղեկատվություն,

- չի ենթադրի, որ ծառայությունները, որոնք այլ կերպ փոխհատուցելի են, կտրամադրվեն կամավոր կերպով ծնողի կամ խնամակալի կամ որևէ այլ անձի կողմից:

Ծնողները/օրինականխնամակալները պետք է վարչաշրջանի սոցիալական աշխատողին տրամադրեն մատչելի տվյալներ և փաստաթղթեր անչափահասի մոտ մտավոր խանգարման/հոգեկան հիվանդության առկայության վերաբերյալ: Ծնողները /խնամակալները կարող են ցանկանալ ստեղծել գրանցատետր, որպեսզի փաստաթղթավորենիրենց երեխայի հետ կատարվածդժբախտ պատահարները/ստացված վնասվածքները կամ մոտակա ժամանակահատվածում տեղի ունեցածդժբախտ պատահարները/ստացված վնասվածքները, որոնք հանգեցրել են PS-ի համար գնահատման գործընթացին: Բացի այդ, ստորև բերված հարցերըձեզ կօգնեն ավելի լավ պատկերացնել PS ծառայությունները, և թե արդյոք ձեր երեխան իրավասու է օգտվել այդ ծառայություններից:

ԿԱՆԳ ԱՌԵՔ ԵՎ ՄՏԱԾԵՔ՝

1. Չունի՞ արդյոք իմ երեխան ինքնակառավարման ունակություն՝ իր մտավոր խանգարման/հոգեկան հիվանդության պատճառով:
2. Հնարավո՞ր է արդյոք, որ իմ երեխանկարող է ներգրավվել հնարավորինս վտանգավոր գործողություններում՝ իր մտավոր խանգարման/հոգեկան հիվանդության պատճառով: Մտածե՛ք, թե արդյոք ձեր երեխան պահպանում էֆիզիկական կարողությունը իրենվնաս հասցնելու ռիսկի պահին:
3. Անհրաժե՞շտ էարդյոք իմ երեխային ավելի շատ վերահսկողություն, քան նույն տարիքի մեկ այլ երեխայի, ով չունի մտավոր խանգարում/հոգեկան հիվանդություն: Ավելի շատ վերահսկողությունը տևում է ավելի երկար կամ ավելի ինտենսիվ է, քան այն վերահսկողությունը, որը տրամադրվում է ձեր երեխայի տարիքի երեխաներին:
4. Անհրաժե՞շտ է արդյոք իմ երեխային 24-ժամյա վերահսկողություն՝տանը ապահով մնալու համար:

Եթե դուք այս հարցերից որևէ մեկին պատասխանել եք այո, ապա PS ծառայությունները պետք է քննարկվեն ձեր վարչաշրջանի IHSS սոցիալական աշխատողի հետ:

PS ծառայությունների մասին ավելին իմանալու համար
կապվեքIHSS ձեր տեղային գրասենյակի հետ